# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 227-Ա

## ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24--րդ կետի պահանջներով և հիմք ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 6 դեկտեմբերի 2018 թվականի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետի պահանջները.
Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանները ուսումնասիրելու և ստուգելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Գևորգ Սիմոնյան - համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի նախագահ,

2) Կարինե Մանուկյան -համայնքապետարանի առաջատար մասնագետ, հանձնաժողովի քարտուղար,

3) Լուսինե Գրիգորյան -համայնքապետարանի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,

4) Սմբատ Սարգսյան- համայնքապետարանի գլխավոր մասնագետ,հանձնաժողովի անդամ,

5) համապատասխան բնակավայրի վարչական ղեկավար- հանձնաժողովի անդամ,

2. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին.

1) վերահսկողություն սահմանել ՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային պայմանների կարիք ունեցող ընտանիքներին հաշվառման վերցնելու գործընթացի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ